2025 թվականն՝ ամփոփ

Փետրվարի 19, 2025

Մշակույթը կյանքի կարևոր բաղկացուցիչ մասն է:

Երիտասարդների այցելությունը Մարտիրոս Սարյանի տուն թանգարան:

Մարտի 13_16ը **Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա** ի կողմից կազմակերպված <<Արհմիության մարտահրավերներ և արհմիութենական սպորտ 2025>> միջոցառման շրջանակներում՝ Դարթսի մրցույթում արծաթե մեդալը շնորհվեց **Ազրոարդի համակարգի աշխատողների Արհմիություն** անդամ, Ստեփանավանի գյուղատնտեսական քոլեջի աշխատակից՝ Ծուշան Ղուկասյանին:

Սիրով շորհավորում ենք:

Ապրիլի 5-ին կայացավ երիտասարդական ակտիվի հանդիպումը, որի ընթացքում ողջույնի խոսքով հանդես եկավ ՃՀՄ նախագահ Հասմիկ Ջհանգիրյանը:

Ներկայացնելով միության պլանավորվող աշխատանքները, նա նշեց, որ միության կարևոր հենակետը երիտասարդներն են և նրանց այսօրվա աշխատանքից է կախված թե ինչպիսի աշխատանքային միջավայր կստեղծվի հետագայում:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին ընթացիկ հարցեր, հաստատվեց աշխատանքային կարճաժամկետ պլանը՝ մինչև 2025թվականի դեկտեմբեր ամիսը:

Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցին ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը, ՀԱՄԿ-ի անձնակազմը և ճյուղային հանրապետական միությունների նախագահները այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու Օսմանյան կայսրության վայրագությունների արդյունքում նահատակված 1,5 միլիոն հայերի հիշատակին:

Ապրիլի 26_ին ՃՀՄ նախագահ՝ Հասմիկ Ջհանգիրյանը մասնակցեց ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից կազմակերպված անասնաբույժի միջազգային օրվան նվիրված միջոցառմանը:

Ողջույնի և շնորհավորանքի խոսքով հանդես եկան Էկոնոմիկայի նախարար՝ Գևորգ Պապոյանը, նախարարի տեղակալ՝ Տաթև Սարգսյանը, **Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն** ՊՈԱԿ ի տնօրեն՝ Գառնիկ Հովհաննիսյանը, ոլորտի այլ ներկայացուցիչներ:

2025թ, Մայիսի 1

Գրանցված աշխատանք՝ սոցիալական երաշխիքներ:

Հունիսի 14-15 _ը

Կայացավ սեմինար՝ մարզաբնակ ինքնազվաղվածներին, սեզոնային աշխատողներին արհմիությունում միավորելու նպատակով:

Կարևոր է ոչ միայն իմանալ և ամրագրել իրավունքները, այլ նաև իրացնել դրանք:

Արհմիությունը աջակցում է բոլոր փուլերում:

Հուլիսի 5_6 ը Աղվերանում կայացավ արհմիութենական հանդիպում, քննարնում անտառային և գյուղատնտեսության ոլորտների աշխատողների մասնակցությամբ:

Շնորհակալ ենք արդյունավետ համագործակցության համար:

Օգոստոսի 10, 2025

Շնորհավորում ենք 7 սահմանաներձ գյուղեր միավորող՝ Տեղ համայնքի օրը:

Ամենօրյա աշխատանքով բարիք ստեղծող, համայնքի բնակիչները իրենց հայրենասիրաությամբ ամուր են պահում մեր երկրի դարպասները:

Արո թիմը և ՃՀՄ նախագահ ՝Հասմիկ և

Ջհանգիրյանը, շնորհավորում են բոլոր բնակիչներին և **Տեղի համայնքապետարան** ղեկավար՝ Դավիթ Ղուլունցին օրվա առիթով:

Սեպտեմբերի 7, 2025

Ագրոարիմիության նախագահ՝ Հասմիկ Ջհանգիրյանը և ճյուղային միության անդամ կազմակերպությունների ներկայացուցիչները սեպտեմբերի 6 ին այցելեցին Գյումրիի սելեկցիոն կայան: Փոխայցերը կլինեն շարունակական:

Հոկտեմբերի 1_4ը **Ագրոարդի համակարգի աշխատողների Արհմիությունը**՝ նախագահ՝ Հասմիկ Ջհանգիրյանի նախաձեռնությամբ, հյուրընկալեց Ուկրաինայի Ագրոարհմիության ներկայացուցիչներին Ուկրաինայի Ագրարային համալսարանի արհմիության նախագահին, գյուղատնտեսական քոլեջների արհմիության նախագահներին, գյուղատնտեսական և վերամշակող խոշոր կազմակերպությունների արհմիության ներկայացուցիչներին և նախագահ՝ Սվետլանա Սամոսուդին:

Այցի շրջանակներում կայացավ երկօրյա աշխատաժողով, որտեղ քննարկվեցին ոլորտի խնդիրները, պատերազմի ազդեցությունը աշխատողների պայմանների վրա և աշխատանքի անվտանգության խնդիրները:

Կանանց հարցերով հանձնաժողովի նախագահ Նադիա Բուռլական և ՀԱՄԿ ի հավասարության հանձնաժողովի նախագահ՝ Լիանա Ամիրաղյանը ներկայացրեցին խտրականության հիմնախնդիրները և 190կոնվենցիայի վավերացումից հետո անհրաժեշտ հետագա քայլերի առաջարկներ:


ПРОГРАММА ДЕЙСТВИЙ IUF ЗА РАВНОПРАВИЕ 2023-2026
СВОБОДА ОБЪЕДИНЕНИЯ И КОЛЛЕКТИВНЫХ ПЕРЕГОВОРОВ

Նոյեմբերի 22_23ը կայացավ <<Կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններ, արհմիությունները՝ վաղը>> թեմայով սեմինարը, որը կազմակերպվել է IUF միջազգային կազմակերպության աջակցությամբ: Սեմինարը վարում են կազմակերպության ներկայացուցիչ՝ Դմիտրի Ստեպանյուկը, աշխատանքային իրավունքի հրավիրված մասնագետ՝ Տիգրան Կիրակոսյանը, Ազրոարհմիության իրավախորհրդատու՝ Նարեկ Ներսիսյանը: